ԵԱՏՄ անդամակցության հետևանքները ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա՝ հարկային մուտքերի և արտաքին առևտրաշրջանառության տեսանկյունից

Քոչարյան Լ. Ա.
ՀՊՏՀ Ֆինանսական Հաշվառման ամբիոն
levonkocharyan@outlook.com

Վճռորոշ բառեր՝ Եվրասիական Տնտեսական Միություն, անդամակցություն, արտահանում, ներկրում, հարկային մուտքեր, առևտրաշրջանառություն

Воздействие Евразийского Экономического Союза на реальный сектор экономики Армении на основе налогов и торгового оборота

Кочарян Л.А.
Кафедра Финансового Учета АГЭУ
levonkocharyan@outlook.com

Резюме: В настоящее время в экономической жизни Республики Армения одним из самых обсуждаемых вопросов является эффективность вступления в члены в Евразийский Экономический Союз (далее-ЕАЭС). Начиная с СМИ и депутатов Национального собрания, заканчивая населением всех регионов, обсуждаются вопросы целесообразности, задач и угроз вступления в ЕАЭС. Следовательно, возникает необходимость представить влияние ЕАЭС на экономику Армении.
Ключевые слова: Евразийский Экономический Союз, членство, экспорт, импорт, таможенная система, интеграция

The Impact of Eurasian Economic Union on the Real Sector Economy of Armenia Based on Taxations and Trade Turnover

Kocharyan L.A.
Chair of Financial Accounting of ASEU
levonkocharyan@outlook.com

Abstract: Nowadays one of the most discussing topic of Armenian economic life is the productiveness of Armenia's integration to the Eurasian Economic Union (EEU). From journalist to deputies of the National Assembly of Armenia, from ordinary people to economists, fantasists and sociologists, discuss the issues, goals, expediency, problems, and threats of this Union. Hence, necessity emerges to present the Eurasian Economic Union's impact on the Armenia's economy.
Keywords. Eurasian Economic Union, membership, export, import, customs system, integration, taxes, influence

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքի ամենաքննարկվող հարցերից մեկը Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միությանը (այսուհետ՝ ԵԱՏՄ) անդամակցության արդյունավետության թեման է: Սկսած լրատվամիջոցներից և Ազգային Ժողովի պատգամավորներից, վերջացրած բնակչության բոլոր հատվածներով, քննարկում են այս միության նպատակահարմարությունը, խնդիրները և սպառնալիքները: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ներկայացնել ԵԱՏՄ անդամակցության տնտեսական հետևանքները ՀՀ տնտեսության վրա:

ԵԱՏՄ անդամակցության հարցը մնում է, և դեռևս կմնա ամենախնդրահարույց հարցերից մեկը: Շրջանառվում են երկու ծայրահեղական կարծիքներ՝ «ԵԱՏՄ»-ն Հայաստանի վրա ունի «կործանարար» ազդեցություն, կամ «ԵԱՏՄ»-ն Հայաստանի համար «փրկություն» է:

Վերլուծենք ԵԱՏՄ անդամակցության հետևանքները ՀՀ տնտեսության վրա՝ կոնկրետ փաստերով, թվերով և վիճակագրական տրվյալներով: Ստորև ներկայացված բոլոր վիճակագրական ցուցանիշները հիմնված են 2 աղբյուրի պաշտոնական հրապարակումների վրա՝ ՀՀ ՊԵԿ-ի և ԵՏՄ Հանձնաժողովի հրապարակումների:

Համաձայն Պետեկամուտների կողմից հրապարակված պաշտոնական տվյալների՝ 2015 թվականին Հայաստանի Հանրապետության Պետական Բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի չափը կազմում է **1,065,644,210,110 ՀՀ դրամ,** որից **39.7%**-ը միայն ԱԱՀ գծով (423,933,475,500): Հավաքագրված ԱԱՀ-ի **10.7%**-ը՝ **45,659,919,660 ՀՀ դրամը**, գոյացել է ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Միևնույն ժամանակ, բյուջե մուտքագրված ակցիզային հարկերը կազմել են 48,988,948,230 ՀՀ դրամ, որից 3,678,573,420 ՀՀ դրամը՝ ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար:



Գծապատկեր 1.

Հավաքագրված 61,487,456,110 ՀՀ դրամ մաքսատուրքերից 53,445,362,860 ՀՀ դրամը կամ **87%**-ը գոյացել են ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերից:

2016 թվականին Հայաստանի Հանրապետության Պետական Բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի չափը կազմում է **1,078,294,202,600 ՀՀ դրամ,** որից **32.6%**-ը միայն ԱԱՀ գծով (391,087,746,100): Հավաքագրված ԱԱՀ-ի **16.8%**-ը՝ **65,934,838,480 ՀՀ դրամը**, գոյացել է ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Միևնույն ժամանակ, բյուջե մուտքագրված ակցիզային հարկերը կազմել են 59,745,162,890 ՀՀ դրամ, որից 9,925,792,650 ՀՀ դրամը՝ ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար:

Հավաքագրված 55,428,498,470 ՀՀ դրամ մաքսատուրքերից 52,979,401,700 ՀՀ դրամը կամ **95.6%**-ը գոյացել են ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերից:

2017 թվականին Հայաստանի Հանրապետության Պետական Բյուջե հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի չափը կազմում է **1,156,425,293,580 ՀՀ դրամ,** որից **35.3%**-ը միայն ԱԱՀ գծով (408,783,718,010 ՀՀ դրամ): Հավաքագրված ԱԱՀ-ի **20.6%**-ը՝ **84,483,736,440 ՀՀ դրամը**, գոյացել է ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար: Ներկայացվածից երևում է, որ ԵՏՄ-ից ներմուծվող ապրանքների համար հավաքագրված ԱԱՀ գումարի չափը 1 տարվա ընթացքում աճել է ***28,1%-ով***: Միևնույն ժամանակ, բյուջե մուտքագրված ակցիզային հարկերը կազմել են 82,324,811,920 ՀՀ դրամ, որից 13,569,669,900 ՀՀ դրամը՝ ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար: ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար հավաքագրված ակցիզային հարկերը նույնպես էապես աճել են՝ կազմելով **36,7%:**





Գծապատկեր 2,3

Հավաքագրված 72,561,600,180 ՀՀ դրամ մաքսատուրքերից 68,582,770,290 ՀՀ դրամը կամ **94.5%**-ը գոյացել են ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերից: ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերը նույնպես գրանցել են էական աճ՝ կազմելով ***29,5%:***

Այժմ ցույց տանք 2015-17թթ. Աճի դինամիկան ԵՏՄ հետ կապված ԱԱՀ, Ակցիզահարկի և Մաքսատուրքերի գծով.

ԵՏՄ հետ հարաբերությունները գնահատող բոլոր հարկային ցուցանիշները աճում են՝ սկսած ԵՏՄ անդամակցության առաջին օրվանից: Բացարձակ արժեքով ամենամեծ կշիռը ունեն մաքսատուրքերը, որը գոյանում է ԵՏՄ անդամ պետությունների ընդհանուր մասնաբաժիններից: Սրանից կարելի է հետևություն անել, որ ՀՀ Բյուջե ԵՏՄ անդամակցության հետևանքով տարեկան ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլար մուտքագրվում է ԵՏՄ մաքսատուրքերից: Եթե նույնիսկ մնացած ոչ մի հարկատեսակ չաճի, և մնա նույնը, ապա միայն մաքսատուրքերի այսպիսի ներհոսքը ունի միանշանակ դրական ազդեցություն:



Գծապատկեր 4

2018 թվականի հունվար-հունիս հաշվետու ժամանակաշրջանի համար Ընդամենը վճարված հարկային եկամուտներ և պետական տուրքի չափը կազմել է **602,147,715,389** ՀՀ դրամ, իսկ 2017 թվականի միևնույն ժամանակահատվածի համար՝ 549,600,384,010 ՀՀ դրամ: Երևում է, որ 2018թ.-ին հունվար-հունիս ժամանակաշրջանում մուտքագրված հարկերը 52,547,331,379 ՀՀ դրամով կամ 9.5% -ով ավել են, քան 2017-ն: Նույն ժամանակաշրջանի համար ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար հավաքագրված ԱԱՀ չափը կազմում է 42,979,601,470 ՀՀ դրամ՝ 2017թ. նույն ժամանակաշրջանում հավաքագրված 34,953,436,440 ՀՀ դրամի փոխարեն:

2018 թվականի հունվար-հունիս հաշվետու ժամանակաշրջանի համար հավաքագրված ակցիզահարկը ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար կազմել է 5,141,554,140 ՀՀ դրամ՝ 2017թ.-ի 6,757,549,900 ՀՀ դրամի համեմատ: Իսկ ԵՏՄ բյուջեից ՀՀ հաշվեգրված մաքսատուրքերի չափը համապատասխանաբար 35,567,132,679 ՀՀ դրամ և 31,201,210,290 ՀՀ դրամ:



Գծապատկեր 5

Այսպիսով, 2018 թվականի առաջին կիսամյակում ԵՏՄ գծով հավաքագրված ԱԱՀ + Ակցիզահարկ + Մաքսատուրք ցուցանիշը կազմել է 83,688,288,289 ՀՀ դրամ՝ 2017թ.-ի առաջին կիսամյակի 72,912,196,630 ՀՀ դրամի համեմատ աճելով 10,776,091,659 ՀՀ դրամով, կամ **12.8%-ով:**



Գծապատկեր 6,7.

Վերոնշյալ վիճակագրական տվյալներից հստակ կարելի է եզրակացնել, որ առնվազն բյուջե մուտքագրված հարկերի առումով ԵԱՏՄ անդամակցությունը ունի դրական ազդեցություն: Բոլոր այն հարկատեսակները, որոնք ուղղակիորեն փոխկապակցված են ԵՏՄ հետ առևտրաշրջանառության հետ, գրանցում են թռիչքային աճ՝ միջինում տարեկան 10-30% չափերով:

ԵՏՄ պետություններից ներմուծվող ապրանքների համար հավաքագրված ԱԱՀ չափերը տարեցտարի աճում են, ինչը ցույց է տալիս ԵՏՄ-ի՝ ՀՀ տնտեսական իրական հատվածի համար առավել հարմար և արդյունավետ շուկա հանդիսանալը: ԵՏՄ ապրանքների հետաքրքրությունը ներկայացված ցուցանիշների համաձայն ՀՀ տնտեսության իրական հատվածում անընդհատ աճում է: Ավելի արդյունավետ է դառնում ապրանքներ ներմուծել ԵՏՄ անդամ պետություններից, քան ԵՏՄ սահմաններից դուրս գտնվող երրորդ երկրներից:



Գծապատկեր 8

Որպես ԵՏՄ անդամակցության ազդեցության վերլուծության եզր ակացություն, կարող ենք նշել հետևյալ փաստերը և եզրակացությունները.

1. Ընդհանուր առմամբ ԵՏՄ անդամակցությունից հետո ԵՏՄ հետ առևտրաշրջանառությունը գրանցում է զգալի աճ: Արտահանման ծավալները աճում են ավելի արագ, քան ներմուծմանը, ինչը կարող է նպաստել այդ ցուցանիշների հավասարմանը:



Գծապատկեր 9

2. ԵՏՄ հետ առևտրաշրջանառության 97.5%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, և միայն 2.5%-ը՝ մնացած երկրներին: Սրանից կարելի է հետևություն անել, որ ԵՏՄ անդամակցության ամբողջ պոտենցիալը չի օգտագործվում, և այդ շուկաները դեռևս մնում են չբացահայտված: Ըստ էության, ԵՏՄ լիներ թե չլիներ՝ ՌԴ հետ առևտուրը միևնույն է աճելու էր նման չափերով:

3. Այնուամենայնիվ, ՀՀ-ի համար ծավալային առումով ԵՏՄ-ն 3-րդ երկրների խումբն է՝ զիջելով ԵՄ և Ասիական երկրներին:

4. Սակայն, եթե ՀՀ տնտեսվարող սուբյեկտները օգտագործեն Ղազախական և Բելառուսական հսկա շուկաների պոտենցիալը, շատ մոտ ապագայում հնարավոր կլինի շրջանցել ԵՄ և Ասիական երկրներին:

5. Զգալի աճ են գրանցում նաև ՀՀ պետական բյուջե կատարված հարկային մուտքերը՝ ԵՏՄ հետ հարաբերություններով պայմանավորված: Մասնավորապես, ԱԱՀ, Ակզիցային հարկի և մաքսավճարների մուտքերը վերջին 3 տարիների ընթացքում գրանցում են ստաբիլ աճ:

Օգտագործված գրականություն

1. www.petekamutner.am
2. www.armstat.am
3. *ՀՀ ԿԱՊԵԿ պաշտոնական հարցման պատասխան նամակներ*